«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
28 հունիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Դիանա Սերգեյի Մաթևոսյանի «ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու,* Գոհար Վարդանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, պրոֆեսոր,* Լիաննա Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության միջև փոխազդեցության ուսումնասիրությունը տնտեսական զարգացման արդյունավետ ռազմավարություններ ձևավորելու առանցքային ասպեկտներից է: Բազմաթիվ տնտեսական մարտահրավերներ և սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայաստանի Հանրապետության պարագայում այս թեման հատկապես արդիական և կարևոր է դառնում: Հայաստանը մնում է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային տնտեսական զարգացումների կիզակետում, և նրա արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության զարգացումն ուղղակիորեն ազդում է երկրի տնտեսական կայունության և քաղաքացիների բարեկեցության վրա:

Համաշխարհային տնտեսությունը մշտապես փոփոխվում է գլոբալ իրադարձությունների պատճառով, ինչպիսիք են ֆինանսական ճգնաժամերը, հիմնական խաղացողների առևտրային քաղաքականության փոփոխությունները և այլն: Այս առումով Հայաստանը, որպես բաց տնտեսություն ունեցող երկիր, ենթակա է արտաքին ցնցումների և համաշխարհային գործոնների ազդեցությանը: Արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության միջև փոխհարաբերությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի արդյունավետ կերպով հարմարվել այդ փոփոխություններին և մշակել համապատասխան ռազմավարություններ: Այս ամենով էլ պայմանավորված է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխկախվածության մակարդակը և տալ դրանց քանակական գնահատականը: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները. ՝

- ուսումնասիրել արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության տեսական և մեթոդաբանական հիմնադրույթները,
- վերլուծել ՀՀ հիմնական մակրոտնտեսական և արտաքին առևտրային ցուցանիշների դինամիկան,
- գնահատել ԵԱՏՄ երկրների արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցությունը,
- բացահայտել ՀՀ արտաքին առևտրի վրա ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունը,
- գնահատել ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների վրա տնտեսական շոկերի ազդեցությունը,
- տալ ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկախվածության քանակական գնահատականը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի

շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները հետևյալն են.

- Արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների կոռելյացիոնռեգրեսիոն վերլուծության հիման վրա, հաշվարկվել են ԵԱՏՄ-ում և ՀՀ-ում աշխատանքի, կապիտալի և ՀՆԱ էլաստիկության գործակիցները և դուրս են բերվել առևտրաշրջանառություն - կապիտալ ու առևտրաշրջանառություն - աշխատանք քրոսս-էլաստիկության գործակիցները:
- Տրվել են 2007-2009թթ. ճգնաժամի ազդեցության գնահատականները: Գնահատվել է ՀՀ արտաքին առևտրաշրջանառության վրա քովիդ-19-ի ազդեցության քանակական մակարդակը՝ ժամանակային շարքի բաղադրիչների, կեղծ փոփոխականների և ARIMA դասի մոդելներով:
- Տրվել է ՀՀ ԵԱՏՄ-ին անդամակցության էֆեկտի քանակական գնահատականը առևտրաշրջանառության մոդելավորմամբ՝ ժամանակային շարքի բաղադրիչներով:
- Ժամանակային շարքի բաղադրիչներով մոդելավորումը, համադրելով ստատիկ և դինամիկ վերլուծությունների հետ (կանխատեսում-փաստացի համադրություն), առաջադրվել է նոր մոտեցում շոկերի քանակական ազդեցության գնահատման համար: Սույն մոտեցումով տրվել են ՀՀ արտաքին առևտրի վրա ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցության քանակական գնահատականները:
- IS-LM-BP մոդելի միջոցով (պահանջարկի գործոններով) գնահատվել է ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխկախվածությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***առաջաբանում*** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության տեսական և մեթոդաբանական դրույթները»***

գլխում ներկայացվել են արտաքին առևտուրը բնութագրող հիմնական ցուցանիշները՝ արտահանում, ներմուծում, առևտրաշրջանառություն, առևտրային հաշվեկշիռ, արտահանման/ներմուծման քվոտաներ, արտաքին առևտրի սիմետրիայի, ասիմետրիայի գործակիցներ, առևտրի պայմաններ, դիվերսիֆիկացիա, կենտրոնացվածություն, դուրս է բերվել արտաքին առևտրից կախվածության գործակից, որը հաշվարկվել և վերլուծվել է ՀՀ-ի համար:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Արտաքին առևտուրը որպես Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների մակրոտնտեսական կայունության գործոն»*** գլխում հեղինակը ուսումնասիրել է ԵԱՏՄ-ն որպես ինտեգրացիոն միավորում, ԵԱՏՄ նպատակները, մակրոտնտեսական քաղաքականությունը, անդամ-երկրների տնտեսական քաղաքականությունների կոորդինացման կարգը, մակրոտնտեսական քաղաքականության ուղենիշները, ինչպես նաև ներկայացվել է ԵԱՏՄ արտաքին առևտրի 8 ցուցանիշների դինամիկան, դրանց սեզոնային միտումները:

Ատենախոսության երրորդ՝ «***ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության փոխազդեցության գնահատականը***» գլխում ներկայացվել է արտաքին առևտրի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա շոկերի ազդեցության մոդելավորումը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության նպատակի և խնդիրների ձևակերպման բաժնում (էջ 7) շեշտվում է, որ ուսումնասիրության արդյունքում կառաջարկվեն լուծումներ և ռազմավարություններ՝ բարելավելու տնտեսական կայունությունը և քաղաքացիների բարեկեցությունը, և չնայած այդ նպատակով կիրառվել են վիճակագրական գործիքակազմ և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդներ, սակայն վերոնշյալ հարցերը արդյունքային գնահատականներում չեն ստացել հիմնավոր եզրահանգումներ՝ առաջարկվող ռազմավարության առումով:
2. Նշված բոլոր նորույթների հիմքում ընկած են զուտ քանակական գնահատականներ, առանց որակական եզրահանգման՝ գիտական նորույթի

տարրերին հատուկ ձևակերպմամբ: Քանակական գնահատականների նպատակադրումը հարկ էր որոշակիացնել դիտարկվող մակրոտնտեսական քաղաքականությունների իրացումներում:

3. Հետազոտության ընթացքում օգտագործված էկոնոմետրիկ մոդելներում միշտ չէ, որ հիմնավորվել է կիրառվող մոդելի արդյունավետության ընտրությունը: Այսպես, էջ 84-ում ՀՀ արտահանման դինամիկայի մոդելավորման համար կիրառվել է պոլինոմիալ 3-րդ կարգի տրենդային մոդելը, որի մոտարկման գործակիցը՝ R2= 0,9643, մինչդեռ նման կախվածություններում առավել հաճախ դիտարկվում են գծային կամ էքսպոնենցիալ մոդելները, որոնց ընտրության արդյունավետությունը հիմնավորվում է ապրոքսիմացիայի համեմատական աստիճանով: Աշխատանքում դիտարկվող մոդելի ընտրության արդյունավետության հիմնավորման հետ կապված համապատասխան հաշվարկները բացակայում են: Եվ թեև հեղինակը նշում է, որ «overfitting-ի խնդիր առկա չէ, քանի որ գծապատկեր 27-ից երևում է, որ մոտարկման հիման վրա կանխատեսումը ինտուիտիվ ուրվագծվում է», պետք է նկատենք, որ ինտուիտիվ մոտեցումը առնվազն գիտական չէ:
4. Աշխատանքի 10-րդ էջի 3-րդ հղման տակ ներկայացված (Иванова В. В., Соколова Б. И. (2003) Деньги. Кредит. Банки: Учебник Г. Е. Алпатов, Ю.В. Базулин и др.; Под ред. В. В. Иванова, Б. И. Соколова . — М.: ТК Велби, Изд-во Проспект,2003. — 624 с.. https://finances.social/kredit-banki-dengi/analiz-sostoyaniya-torgovogo-36119.html) գիրքը 2003 թ.-ից հետո պարբերաբար հրատարակվել է 2009, 2011, 2016, 2023, գուցե և ավելի թվականներին, ինչու՞ չօգտագործել այդ գրքի թարմ վերահրատարակությունները, այլ օգտվել 20 տարի առաջվա գրականությունից: Բացի այդ, չի նշվել հղման էջը (դրանք 389-390 էջերն են), այլ ներկայացվել է գրքի ողջ ծավալը, տվյալ գրքից առկա են նաև սխալ թարգմանություններ, որոնց արդյունքում էլ բերված բոլոր բանաձևերը ստացել են սխալ տեսք՝ սխալ մեկնաբանություններով:
5. Աշխատանքում կանխատեսումները ներառում են 2020-2022թթ. երբ աշխատանքը ներկայացվել է 2024թ, ինչը, մեր կարծիքով, ընդունելի չէ:
6. Աշխատանքում բազմաթիվ են մտքի, տերմինների սխալ ձևակերպումներ, մասնավորապես՝ գծապատկեր 21 անվանումը կարիք ունի հստակեցման. ինչ է նշանակում «պատերազմի ազդեցության դինամիկա», աղյուսակ 7, 8 և 9-ում նշված «Կոռելյացիոն մատրից» սխալ է, պետք է լինի կոռելյացիոն մատրիցա, աղյուսակ 2-ում և էջ 35-ում ներկայացված տերմինները սխալ են ձևակերպված, էջ 53-ի հղման մեջ կիրառված ծրագիրը «R studio , R» թարգմանվել է հայերեն, իսկ աղյուսակ 3-ում չկան տերմինների հայերեն տարբերակները, որոնք, մեր կարծիքով, թույլատրելի չեն գիտական աշխատանքներում, էջ 65-ում նշված

«Ֆիշերի ռեգրեսորների միացման և անջատման չափանիշ» վիճագարությանը կամ տնտեսաչափությանը հայտնի չէ, գոյություն ունի Ֆիշեր-Սնեդեկորի F չափանիշ, որով ստուգվում են վարկածները և այլն:

9. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի մի շարք թերություններ, մասնավորապես. գծապատկերներ 1,2,3,4,5,6,11,20–ում տրված չեն ցուցանիշների չափի միավորները, գծապատկեր 10-ում (էջ 31) բացակայում են համապատասխան նշանակումները, աղյուսակ 23-ում «գումարային ներմուծման» փոխարեն ներկայացված է «գումարային արտահանումը», էջ 67-ում SARIMA մոդելի համար ելակետային տվյալների աղբյուրի հղումը բացակայում է և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիանա Սերգեյի Մաթևոսյանի «ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության արտաքին առևտրի, մակրոմիջավայրի վերլուծությունների, նոր մոտեցումներով գործիքակազմի մշակման համար, ստացված քանակական գնահատականների և սցենարային վերլուծության արդյունքների հիման վրա որոշումների կայացման համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 10 (տաս) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Դիանա Սերգեյի Մաթևոսյանի «ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 10 (տաս) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ–ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը խորհրդում բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի է Ը.00.06–«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (28.06.2024թ., արձանագրություն թիվ 10):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր **Գ.Վարդանյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Լ.Հարությունյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Գ.Վարդանյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լ.Հարությունյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ.քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու **Ե.Ա.Հակոբյան**
«28» հունիսի, 2024թ.
Կ.Տ.